INGO

VTB

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ճանապարհորդության ապահովագրությունը հատուցում է արտասահմանում գտնվելու ընթացքում ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ նրա առողջական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած ծախսերը

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 51, 53,
Տարածքներ 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59 21 21
Կայք՝ www.ingoarmenia.am

ԻՆՉԻՑ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- Բժշկական ծախսեր
- Բուժա-տրանսպորտային ծախսեր
- Օգնության կազմակերպման հետ կապված ծախսեր
- Հետմահու ռեպատրիացիայի հետ կապված ծախսեր

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

30,000 Եվրո
Մեկ ապահովագրական պատահարի գծով հատուցման սահմանաչափը կազմում է 1,000 եվրո:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Տարեկան 5,000 ՀՀ դրամ*:
*65-ից 74 (ներառյալ) տարեկան ապահովագրված անձանց գծով ապահովագրավճարը կրկնապատկվում է, 75-ից 84 (ներառյալ) տարեկանի դեպքում՝ եռապատկվում, 85-ից 99 (ներառյալ) տարեկանի դեպքում՝ քառապատկվում:

ՈՐՔԱՆ Է ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Չի կիրառվում

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի 03.05.2024թ. թիվ 250 արձանագրությամբ հաստատված Աջակցության ապահովագրության կանոններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրված անձի ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված

- Բժշկական և դեղորայքային օգնության կազմակերպման և մատուցման (բժշկական ծառայություններ), այդ թվում՝ խորհրդատվությունների պայմանագրով սահմանված այլ ծառայությունների վճարման հետ, ներառյալ ֆիզիկական անձի առողջության վատթարացման հետևանքով տեղի ունեցած բուժա-տրանսպորտային ծախսերի հետ:
- Պայմանագրով նախատեսված անկանխատեսելի ծախսերի հետ, այդ թվում՝ հետմահու ռեպատրիացիայի կազմակերպման ծախսերի վճարման, ապահովագրված անձի ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպման, իրավաբանական խորհրդատվության ծառայության վճարման հետ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, որը գործում է 30 օր:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Անմիջապես կապ հաստատել EURASIA ASSISTANCE ընկերության հետ՝ հետևյալ կոնտակտներով.

- +7 495 787 21 78 ; +7 495 787 77 89;
- Viber: +7 903 671 12 96
- Whatsapp: +7 903 671 12 96

Հայտնել հետևյալ տեղեկությունները՝

- Ապահովագրված անձի անուն, ազգանուն,
- Ապահովագրության վկայագրի համարը,
- Անհրաժեշտ օգնության բնույթը,
- Գտնվելու վայրը և հետադարձ կապի հեռախոսահամարը:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարից հետո ոչ ուշ քան 30 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ ապահովագրական ընկերության մասնագետների կողմից տրամադրված կապի միջոցներով,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Էքստրեմալ սպորտաձևերով զբաղվելիս պատահարների հետևանքով առաջացած վնասները
- Ալկոհոլային և/կամ թմրանյութային, ինչպես նաև այլ տոքսիկ կամ հոգեմետ միջոցների օգտագործման հետևանքով առաջացած վնասները
- Ապահովագրված անձի և/կամ Շահառուի՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալուն միտված կանխամտածված գործողությունների հետևանքով առաջացած վնասները
- Հակաօրինական գործողությունների հետևանքով տեղի ունեցած պատահարները
- Ապահովագրական ընկերության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: